ՀՀ ԿԳՄՍՆ «ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Քննարկվել և հաստատվել է՝
«Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի նիստում
« »____202 թ №

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ

Ք. ԱՐԹԻԿ

«ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ – Ի ՏՆՏԵՍԿԱՆ ՄԱՍԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-Ի /այսուհետ՝ Քոլեջ / տնտեսական մասի կանոնակարգը սահմանում է տնտեսական մասի գործունեությունը, նպատակը խնդիրները, իրավասությունները, գործառույթները, կառավարումը, տնտեսական մասի ղեկավարի և աշխատողների իրավունքներն ու պարտականությունները:

1.2 Տնտեսական մասի գործունեությունն իրականացվում է Քոլեջի կանոնադրությանը, սույն կանոնակարգին և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.3 Տնտեսական մասը Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանում է, որի նպատակն է Քոլեջի վարչատնտեսական աշխատանքների ընթացիկ գործունեության կազմակերպումը, ծրագրումը, համակարգումը, ղեկավարումը և վերահսկումը:

1.4 Սույն կանոնակարգը սահմանում է Քոլեջի տնօրենական և /կամ/ մանկավարժական խորհուրդը, հաստատում, ինչպես նաև նրանում լրացումներ և փոփոխություններ կատարում է կառավարման խորհուրդը:

1.5 Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում Քոլեջի կառավարման խորհրդի հաստատումից հետո:

2. ՔՈԼԵՋԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Տնտեսական մասի գործունեությունն իրականացվում է Քոլեջի վարչատնտեսական աշխատանքները կանոնակարգող տնօրենի տեղակալի, լաբորանտների, պահեստապետի, բուժքրոջ և ուսումնաօժանդակ անձնակազմի միջոցով՝ տնտեսական մասի և իրենց աշխատանքային գործառույթների իրականացմամբ:

Տնտեսական մասը՝

- իրականացնում է Քոլեջի տնտեսական և սպասարկման աշխատանքների կազմակերպման գործընթացը,
- իրականացնում է գույքի պահպանման, վերանորոգման, համալրման աշխատանքների կազմակերպումը,
- կազմակերպում է Քոլեջի տարածքի /շենքեր, շինություններ/ բարեկարգման, ներքին հարդարման աշխատանքների համար անհրաժեշտ նյութական ռեսուրսների պլանավորման աշխատանքները,

- կազմակերպում և վերահսկում է մաքրության պահպանման աշխատանքների իրականացումը,
- իրականացնում է շահագործման մեջ գտնվող գույքի, մեքենաների, սարքավորումների սարքին վիճակի ապահովման աշխատանքները,
- ապահովում է աշխատակիցների անվտանգ աշխատանքի պահպանումը,
- ապահովում է Քոլեջի աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմանները,
- ապահովում է կառուցվածքային ստորաբաժանումներին պահեստից նյութական միջոցների, արագամաշ ապրանքների տրամադրման գործընթացը,
- վերահսկում է տնտեսական մասի աշխատողների աշխատանքային կարգապահությունը,
- մշակում է այլ կազմակերպություններից ստացված նամակների պատասխանները,
- իրականացնում է Քոլեջի ստորաբաժանումների կողմից ներկայացվող տվյալների վերլուծությունը:

Տնտեսական մասի ղեկավարը՝

- համակարգում և վերահսկում է Քոլեջի պահեստապետի, լաբորանտների, բուժքրոջ և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատանքները,
- իրականացնում է ուսումնական գործընթացի կազմակերպման համար նախատեսված ռեսուրսների ձեռքբերման և բաշխման գործընթացների կազմակերպումը սահմանված ժամկետներում,
- մասնակցում է տնտեսական ծախսերի նախահաշիվների կազմման աշխատանքներին (ընթացիկ նորոգումներ,բարեկարգումներ),
- մասնակցում է տնտեսական մասի հետ կապված հրամանների նախագծերի և այլ փաստաթղթերի մշակմանը,
- ներկայացնում է տնտեսական մասի գործունեությունը Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումներում, մասնակցում է ուսումնական գործունեությանն առնչվող հարցերի քննարկմանը,
- իր իրավասության սահմաններում տնտեսական մասի աշխատողներին, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և աշխատողներին տալիս է հանձնարարություններ, կարգադրություններ, ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- անձնական պատասխանատվություն է կրում տնտեսական մասի գործունեության համար,

- ապահովում է աշխատողների կողմից ներքին կարգապահական կանոնների կատարումը,
- ոլորտի գործունեության մասին հաշվետվություններ է ներկայացնում տնօրենին:

Տնտեսական մասի աշխատողները՝

- իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսական մասի գործունեության նպատակներին և խնդիրներին համապատասխան , Քոլեջի կանոնադրությամբ ու սույն կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան,
- կատարում են Քոլեջի տնօրենի, վարչատնտեսական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի հանձնարարականները՝ պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները և Քոլեջի աշխատողների ներքին կարգապահական կանոնները,
- տնտեսական մասի աշխատողները պատասխանատվություն են կրում իրենց պաշտոնական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, Քոլեջի գույքին վնաս պատճառելու, Քոլեջի աշխատողների ներքին կարգապահական կանոնները խախտելու համար՝ ԱՕ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

Արթիկի պետական քոլեջի տնօրեն՝ Ա. Ղուլիջողյան